

ԱՐԱՔԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՎԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

1802/Յ18 դասընթացի նկարագրիչ

(շաբաթական 2 դասաժամ — 24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունք, դասընթացը՝ առանց եզրափակիչ գնահատման)

Դասախոս, սեմինարավար՝ Մարատ Մ. Յավրումյան, Բ.գ.թ., դոցենտ
ԵՊՀ, արաբագիտության ամբիոն, սենյակ՝ 330, հեռ.՝ +374 (0) 60 710582
Էլ. փոստ՝ myavrum@ysu.am

Գրասենյակային ժամեր՝ մինչև դասաժամը կամ նախնական պայմանավորվածությամբ

Նպատակը

Դասընթացի նպատակը արաբական բարբառագիտության և հանրալեզվաբանության դիտարկումն է արաբերենի պատմությանն առնչվող հարցադրումների շրջանակում: Արաբերենը հայտնի է իր տարբերակային ձևերով, նորմավորված արաբերենը (հայտնի որպես՝ Դասական արաբերեն, ժամանակակից գրական արաբերեն, ժամանակակից ստանդարտ արաբերեն) այս տարբերակներից թերևս գրայինն է: Արաբական աշխարհում առօրյա խոսակցական լեզուն ենթակա է այլ նորմերի: Առանց հանրալեզվաբանական ենթատեքստի լեզվական այս բազմազանությունը բարդ է խմբավորել և դասակարգել: Ելակետային այս դրույթների շրջանակում արաբերենի լեզվական բազմազանությունը քննարկվելու է ինչպես «ավանդական» բարբառագիտության, լեզվաբանական աշխարհագրության, այնպես էլ հանրալեզվաբանական հասկացակազմի ներառմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կցուցաբերի.

Տեսական գիտելիքներ.

- բարբառագիտության, հանրալեզվաբանության ժամանակակից ընկալումների ու խնդրացանկի իմացություն,
- բարբառագիտական հետազոտություններում (պատմական) հանրալեզվաբանության, լեզվաբանության պատմության (լեզվաբանական ուսմունքների պատմության, լեզվաբանության պատմագրության) մոտեցումների ներառման հնարավորությունների իմացություն:

Բուն մասնագիտական գործնական կարողություններ.

- արաբական բարբառախոս աղբյուրներ հետազոտելու մեթոդներին և տեխնիկական գործիքակազմին տիրապետելու կարողություն,
- արաբական բարբառագիտությանն ու լեզվի պատմությանն առնչվող ուսումնասիրությունների հիմքում ընկած մեթոդական մոտեցումները, քննարկվող կոնցեպտները վերլուծելու, համադրելու և քննադատորեն իմաստավորելու կարողություն,
- մասնագիտական գիտելիքը նորացնելու կարողություն:

Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ 1 — «Բարբառագրության» ներածություն — ներածական մեկ դասախոսության ընթացքում հստակեցվելու է դասընթացում կիրառվող հասկացակազմի «բարբառագրական» մասը՝ ներկայացվելու են լեզվաբանական աշխարհագրություն, վիճակագրական բարբառագիտություն, բազմահատկանիշ դասակարգում, բարբառային քարտեզներ, զուգաբանություններ և այլ հասկացություններ (ՋԱՀՈՒԿՅԱՆ 1972:5-36, 143-156):

ԹեՄԱ 2 — Հանրալեզվաբանության ուսումնասիրության առարկան — ներածական երկու դասախոսության ընթացքում քննարկում է ծավալվելու հանրալեզվաբանության հիմնական հասկացակազմի ու խնդիրների, գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության, լեզվի սոցիալական հեռանկարի, կոնտակտային լեզուների (կոյնե, փիջին, կրեոլ), ինչպես նաև հանրալեզվաբանական ուսումնասիրությունների մեթոդների շուրջ (БЕЛИКОВ, КРЫС ИИ 2000:10-45, 47-61, 63-69, 80-100, 190-230): Դասախոսություններին հաջորդող երկու ՍԵՄԻՆԱՐը նվիրված է լինելու հանրալեզվաբանական նախադեպերի լսարանային քննարկմանը (ЧЕМОДАНОВА 1975):

ԹեՄԱ 3 — Արաբերենի պատմության և արաբական բարբառների ուսումնասիրության ժամանակակից լեզվաբանական մոտեցումները (BEHNSTEDT 2006), (ABBOUD-HAGGAR 2006), (PALVA 2006), (MILLER 2006) — ներածական երկու դասախոսության ընթացքում հստակեցվելու են բարբառագիտական հետազոտություններում պատմա-համեմատական և հանրալեզվաբանական մոտեցումների կիրառման հեռանկարները, շարունակվելու է հասկացական գործիքակազմի մանրամասնումը արաբերենի պատմության և հանրալեզվաբանական իրավիճակի գնահատման համատեքստում (OWENS 2001, OWENS 2006:1-33): Հաջորդող մեկ ՍԵՄԻՆԱՐի ընթացքում վիճակագրական ու համեմատական մեթոդների, բազմահատկանիշ դասակարգման մոտեցման ու արաբերենի պատմության փուլայնացման հենքի վրա մանրամասնվելու են «մինչսփյուռքային արաբերենի» մասին պատկերացումները (OWENS 2005), (WATSON 1992b):

ԹեՄԱ 4 — Արաբերենում «փիջինացման» և «կրեոլացման» հնարավորության շուրջ — երկու դասախոսության ընթացքում զուգաբանությունների հենքի վրա ներմուծվելու է արաբական բարբառների «ընդհանրական քերականական միջուկի» մասին հասկացությունը, քննադատաբար դիտարկվելու են «փիջին- և կրեոլ-արաբերենների» թեզի շուրջ 1980-ականներին ծավալված մասնագիտական քննարկումները: Դասախոսություններին հաջորդող մեկ ՍԵՄԻՆԱՐի ընթացքում դիտարկվելու է նուբի-արաբերենի (սուդանյան արեալ) օրինակը որպես կրեոլ (OWENS 1989, GOODMAN, 1986, HEATH 1986, HOPKINS 1988, VERSTEEGH 2004, OWENS 2006b): Ընթացիկ ստուգումների գրավոր աշխատանքին նախապատրաստվելու համար առաջարկվելու այս հարցադրման շուրջ հավելյալ գրականություն (FERGUSON 1989), (OWENS 2001c, 2014), (THOMASON&ELGIBALI 1986), (VERSTEEGH 1993a):

ԹեՄԱ 5 — Արաբական աշխարհում արաբերենի տարբերակային ձևերի, լեզվական բազմազանության, լեզվական իրավիճակի, լեզվական քաղաքականության շուրջ լսարանային քննարկումներ՝ նախադեպերի քննության հենքի վրա (դիգլոսիա/երկլեզվություն, լեզվական իրավիճակի քաղաքականացում, «կրթվածների» խոսակցական արաբերեն, պրեստիժային խոսվածքներ, լեզվի «դավանանքահենք» բազմազանություն) (FERGUSON 1959, 1959b, 1996), (MITCHELL 1978, 1986), (HOLES 1983, 1991b, 1995) (JASTROW 2004):

ԹեՄԱ 6 — Ժամանակագրական տարբեր ընդգրկում ունեցող աղբյուրների համագրության հիման վրա արաբ բարբառախոս իրավիճակների քննարկում (տեքստ, ձայնագրություններ, ձայնագրությունների սղագրություններ) — բարբառախոս իրավիճակների բառապաշարային, քերականական առանձնահատկությունների վերհանում, զուգաբանությունների դիտարկում (FISCHER, JASTROW 1980), ([SemArch - Semitisches Tonarchiv](#)):

ԹեՄԱ 7 — Ամփոփիչ դիտարկումներ, ընթացիկ քննական արդյունքների (ինքնա)վերլուծություն:

Ստուգումների անցկացման ձևը.

Նախատեսված երկու ընթացիկ ստուգումներից առաջինն անցկացվում է ուսանողի փոքրածավալ

գրավոր աշխատանքի (ընտրված հարցադրման շուրջ սեղմագիր/ռեֆերատ), երկրորդը՝ գրախոսական բնույթի էսսեի (750 բառի սահմաններում) գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ ինը միավոր առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր ստուգում ներառում է մեկ հարցադրում:

Գնահատման չափանիշները.

Գնահատումը կատարվում է դասախոսի կողմից՝ հաշվի առնելով շարադրանքի բովանդակությունն ու ոճը: Գնահատման չափօրինակները.

- սեղմագրի (էսսեի) բովանդակությունը չի համապատասխանում/մասամբ է համապատասխանում/լիովին է համապատասխանում նյութին,
- Տրված չեն հանգուցաբառերը/ճիշտ չեն ընտրված հանգուցաբառերը/տրված են հանգուցաբառերը,
- Ձեն պահպանվել/ոչ միշտ են պահպանվել/պահպանվել են սեղմագրի (էսսեի) շարադրանքի կանոնները:

Դասընթացի համար օգտագործվող գրականություն.

ՋԱՀՈՒԿՅԱՆ, Գ.Բ. (1972). Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն): Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

ABBOUD-HAGGAR, S. (2006). "Dialects: Genesis". *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, Vol. 1, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski, 613-622. Leiden: E. J. Brill.

BEHNSTEDT, P. (2006). "Dialect Geography". *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, Vol. 1, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski, 583-593. Leiden: E. J. Brill.

FERGUSON, Ch. A. (1959). "The Arabic Koine". *Language* 35/4: 616-630.

_____. (1959b). "Diglossia". *Word* 15:325-40.

_____. (1982). "Diglossie". *Anwendungsbereiche der Soziolinguistik*, ed. Hugo Steger, 253-276. Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft.

_____. (1989). "Grammatical Agreement in Classical Arabic and the Modern Dialects: A Response to Pidginization Hypothesis". *Al-Arabiyya* 22:5-18.

_____. (1996). "Epilogue: Diglossia Revisited". *Understanding Arabic. Essays in Contemporary Arabic Linguistics in Honor of El-Said Badawi*, ed. Alaa Elgibali, 49-67. Cairo: The American University in Cairo Press.

FISCHER, W., JASTROW, O. (1980). *Handbuch der Arabischen Dialekte*. Harrassowitz: Wiesbaden.

GOODMAN, M. (1986). REVIEW of: Pidginization and creolization: The case of Arabic. By KEES VERSTEEGH. (Amsterdam studies in the theory and history of linguistic science, IV: Current issues in linguistic theory, 33.) Amsterdam & Philadelphia: Benjamins, 1984. Pp. xiii, 194.; in: *Journal of Creole Languages* 1:165-170.

HEATH, J. (1986). REVIEW of: Pidginization and creolization: The case of Arabic. By KEES VERSTEEGH. (Amsterdam studies in the theory and history of linguistic science, IV: Current issues in linguistic theory, 33.) Amsterdam & Philadelphia: Benjamins, 1984. Pp. xiii, 194; in: *Language* 62/4:952-953.

- HOLES, C. (1983). "Bahrain dialects: Sectarian differences exemplified through texts". *Zeitschrift für arabische Linguistik* 10:7-38.
- _____. (1991b). "The use of variation: A study of the political speeches of Gamal Abd al-Nasir". *Perspectives on Arabic Linguistics: Papers from the Annual Symposium on Arabic Linguistics, Vol. V, Ed. by Mushira Eid and Clive Holes*, 13-45. Ann Arbor: Michigan.
- _____. (1995b). "Community, dialect and urbanization in the Arabic-speaking Middle-East". *Bulletin of the School of Oriental and African Studies* 58/2:270-287
- HOPKINS, S. (1988). REVIEW of: *Pidginization and creolization: The case of Arabic*. By KEES VERSTEEGH. (Amsterdam studies in the theory and history of linguistic science, IV: Current issues in linguistic theory, 33.) Amsterdam & Philadelphia: Benjamins, 1984. Pp. xiii, 194.; in: *Zeitschrift für Arabische Linguistik* 18:98-99.
- JASTROW, O. (2004). "Jüdisches, christliches und muslimisches Arabisch in Mosul". *Approaches to Arabic Dialects: A Collection of Articles Presented to Manfred Woidich on the Occasion of His Sixtieth Birthday*, ed. Martine Haak, Rudolf Erik de Jong, Kees Versteegh, 135-150. Leiden: E. J. Brill
- MILLER, C. (2006). "Dialect Koine". *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, Vol. 1, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski, 593-597. Leiden: E. J. Brill.
- MITCHELL, T.F. (1978). "Educated Spoken Arabic in Egypt and the Levant, with Special Reference to Participle and Tense". *Journal of Linguistics* 14:129-375.
- _____. (1986). "What is Educated Spoken Arabic". *International Journal of the Sociology of Language* 61:7-32.
- OWENS, J. (1989). "Zur Pidginisierung und Kreolisierung im Arabischen". *Afrika und Übersee* 72:91-107.
- _____. (2001). "Arabic Sociolinguistics". *Arabica* 48:419-469.
- _____. (2001c). "Creole Arabic: The Orphan of All Orphans". *Antropological Linguistics* 43/3:348-378.
- _____. (2006). *A Linguistic History of Arabic*. Oxford: Oxford University Press.
- _____. (2006b). "Creole Arabic". *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, Vol. 1, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski, 518-527. Leiden: Brill.
- _____. (2014). "The Morphologization of an Arabic Creole". *Journal of Pidgin and Creole Languages* 29/1:232-298.
- THOMASON, S. & ELGIBALI, A. (1986). "Before the Lingua Franca: Pidginized Arabic in Eleventh Century". *Lingua* 68:317-349.
- PALVA, H. (2006). "Dialects: Classification". *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, Vol. 1, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski, 604-613. Leiden: E. J. Brill.
- VERSTEEGH, K. (1993a). "Leveling in the Sudan: From Arabic Creole to Arabic Dialect". *International Journal of the Sociology of Language* 99:65-79.
- _____. (2004). "Pidginization and Creolization Revisited: The Case of Arabic". *Approaches to Arabic Dialects: A Collection of Articles Presented to Manfred Woidich on the Occasion of His*

Sixtieth Birthday. ed. Martine Haak, Rudolf Erik de Jong, Kees Versteegh, 343-358. Leiden:
E. J. Brill.

Watson, Janet C.E. (1992b). "Kaškaša with Reference to Modern Yemeni Dialects". *Zeitschrift für
arabische Linguistik* 24:60-81.

Чемоданова, Н.С. (общ. ред.) (1975). *Новое в лингвистике. Вып. 7. Социолингвистика*. М.:
Прогресс.

Беликов В.И., Крысин Л.П. (2000). *Социолингвистика*. М.: Издательство РГГУ.

ԴԱՍԸՆԹԱՅԸ ՊԱՐՏԱԳԻՐ Է
«ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԱՎՐԻԱՏԻ
ՈՒՍ. ԾՐԱԳԻՒ ՀԱՄԱՐ